



## ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԱՐՎԵՍՏԻՆ

Սույն թվականի ապրիլի 26-ին հոգևոր ճեմարանի հանդիսությունների դաჩիճում տեղի ունեցավ Բինգերորդ դարի հայ հոգևոր երաժշտական նվիրված գրական երաժշտական երեկո՝ շարականագիտություն առարկայի դասախոս պրճ. Խորեն Պալյանի և հոգևոր ճեմարանի ուսանողության ջանքերով։

Համերգին ներկա էին Վեհափառ Հայրապետ, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և քազմադիլ հյուրեր։

Գրական-երաժշտական երեկոյի բացման խորով համեմա եկավ հոգևոր ճեմարանի քարտուղար Տ. Հովսիկ քին. Լազարյանը։

«Վեհափառ Տեր, Զեր առաջարկությամբ այսօր հոգևոր ճեմարանի դաჩիճում կլայնա հոգևոր համերգ Շարականագիտություն առարկայի դասախոս տիպը Խորեն Պալյանի և ճեմարանի ուսանողների ջանքերով։ Համերգի ծրագրում տեղ են գտել 5-րդ դարի շարականներ։ Այսուհետև պարբերաբար պետք է կազմակերպվեն նման օգտակար համերգներ։»

Հայ երաժշտական կարևոր ճյուղերից մեկն է հոգևոր երաժշտությունը, որի ամենահրատաս տեսակը համարվում են շարականները։ Բացի այն, որ շարականները հարուստ մեղեղի ունեն, դրանք միևնուն ժամանակ հայ բանասեղծական մտքի լավագույն արտահայտություններն են իրենց խոր իմաստով, զգացումի նրբությամբ։ Շարականները մեր հոգևոր մշակույթի ամբակտելի մասն են կազմում։ Դժբախտաբար, առ այսօր շարականները համեմատաբար քիչ են ուսումնասիրվել։

Միայն վերջին տարիներին է, որ սկսվել են հանգամանալից ուսումնասիրություններ՝ վերծանելով մեր խազագրությունը, մշակելով մեր տաղերն ու գանձերը։

Թե ինչ տպապարություն են թողել շարականները ուսումնասիրությունների վրա, կարելի է պատկերացնել՝ մեջ բերելով Ֆերդինանդ Լուսափեի խոսքը, իր «Բանաստեղծության պատմություն» աշխատությունից. «Քնարերական ճյուղում ոչ մի ժողովրդի գրականություն չի կարող համեմատվել Հայոց գրականության հետ՝ զգացումների միատիկ խորության և խանդակաթ ու մաքրամաքուր սիրո, մտածումների բնագանցական վեհության տեսակետով։ Եվրոպյան քրիստոնեական բանաստեղծությունը երբեք չի կարողացել հավասարվել Շարականցի հետ, այս մեծարժեք գոհարատուիթին, որ պարունակում է Հայ Եկեղեցու ամենից թանկագին ադամանդները։ Բայց միշտ հեշտ չէ հասկանալ այս արևելյան ոճը, որ ասպարում է համակ այսուկերներով՝ այնքան արտասովոր, որքան շքեղ։ Այսուհանդերձ, երբեք զգացումը խեղդված չի փոխարելությունների ծանրության տակ։»

Այսքան վեհորեն գնահատված մեր Շարականցը արժանի է մասնավոր հոգածության և ուսումնասիրության թե՛ որպես գրականություն և թե՛ որպես երաժշտություն։

Այսուհետև Բինգերորդ դարի հայ հոգեվոր երգի նկարագրի, երաժշտական ու գեղարվեստական, ինչպես նաև Աստվածաբանական հարցերի արծարծման մասին բովանդակալից ու ուշագրավ խոսքով հանդես եկավ պրճ. Խորեն Պալյանը։

## «ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐՈՒՄ»

«Յամենայն եկեղեցական մատեանս մեր՝ յիրահի է ի գլուխ դասել զգիրս շարականաց, իբրև պասկ գեղապատշաճ ի զարդ աստուածային պաշտօներգութեան».

(Գ. Ավետիքյան, Բացատր. շրկ., ԺԲ)

Հայ մշակույթի գանձարանում՝ պատմագրության, ճարտարապետության, մանրանկարչության, թժշկագիտության կողքին իր ուրուն տեղն ունի նաև հայ հոգևոր քնարերգությունը՝ հոգևոր երգարիւեատը։ Այն անցել է զարգացման հետաքրքիր ուղի։

Ակզբանակիրվելով 5-րդ դարի արշալույսին մեր գրի ու դպրության հետ միաժամանակ, մեր հոգևոր երգը անընդհատ զարգացել ու հարստացել է և շորջ հազար տարվա ընթացքում, մինչև 15-րդ դարը, նոյնիվել ու մեզ է հասել՝ պահպանելով մեր լեզվի բյուրեղային մաքրությունն ու հայկականությունը հավաստող հատկանիշները։ Այն իր մեջ խստացնում է նաև մեր ազգային տոհմիկ երգ-երածշության ու քնարերգության բազմադարյան պահպաները։

Իր զարգացման հազարամյա ժամանակահատվածում հորինվել են շորջ երկու հազար կանոնական երգեր ու շարականեր, որոնք և՛ իբրև մեղեդի, և՛ իբրև բանաստեղծական խոսք բարձրարժեք ստեղծագործություններ են և, ինչպես ասացինք վերևում, հանդիսանում են մեր հոգևոր մշակույթի անբաժան մեկ արտահայտությունը, որին կարող է նախանձել յորաբանչյուր բաղաքակիրթ ժողովորդ։

Մեր ծիսական մլուս ժողովածուների համեմատ, շարականցները միմյանց նկատմամբ ավելի քիչ քնարային տարբերություններ ունեն։

Այն հանգամանքը, որ հայ հոգևոր երգը սկզբնավորվում է հինգերորդ դարում, մեր դպրության հետ միաժամանակ, խոսում է այն մասին, որ այդ օրերին անհրաժեշտություն է զգացվել ունենալու նաև հոգևոր երգեր սեփական լեզվով։

Հոգևոր երգը և հանդիսանում էր մաքանան ազդակներից մեկը, որով Հայաստանյաց եկեղեցին պիտի կարողանար ձերբազաւել օտար՝ հատկապես Հույն և Աստի եկեղեցիների ազդեցություններից։

Հոգևոր երգի ուսումնասիրությունը ցուց է տվել, որ քրիստոնեության առաջին դարերում պաշտամունքային կանոնավոր օրիներգություններ կամ հասուկ հոգևոր երգեր չեն եղել, այլ երգվել են սաղմոսների

կամոններ՝ «Հասարակ ձայնի», այսինքն՝ պարզ եղանակով։

Վերոնիշյալի մասին հետաքրքիր տեղեկություններ են ավանդում մեզ մեր մատենագիրները՝ Փ. Բուզանդը, Եղիշիկը, Կորյունը, Ղ. Փարպեցին և որիշներ։

«Լեզուք մեր լնուրամցեան են ի սաղմուերգութեան, զոր Աստուած խնդրէ՝ զայն ոչ ունիմք... շրթամբը սիրեմք զԱստուած» (Խրամ Եղմակ)։

Ավելի ուշ այդ սաղմուեներն ակտեցին հարմարեցնել ութ ձայնեղանակներին, ինչպես վկայակոչվում է այդ մասին Հարանց վարքում, որը և կոչվել է Սաղմուերգութիւնը։

Եկեղեցական բարեկարգութիւնը որպես յայլագգու քրիստոնեից, նոյնայէս և ի մերում առաւելապէս պայծառացան ի չորրորդ և ի հինգերորդ դարուն...» իրավամբ գրում է Գ. Ավետիքյանն իր «Բացատրութիւնք շարականաց» արժեքավոր աշխատության մեջ։ Այս, հատկապէս չորրորդ և հինգերորդ դարերուն ավելի է ծավալիլու և զարգանում հոգևոր երգը պաշտամունքային ժամերի մեջ՝ «առ ի բառնալոյ զանձրոյթ ժողովդիւննն, որ երկար սաղմուաց և ի կարդացմանց թուանայր ի պաշտօնն աստուածային, և եղանակաց բաղդրութիւն կարօտացաւ իբրև յեղոյ...» գրում է պատմիչը։ Մեզանում ևս զգալի զարգացում ապրեց հոգևոր երգը։ Փարպեցին գրում է, որ Մ. Մաշուոցը երկար ժամանակ մտածում էր, թե ինչպես «ինքեան ձայնի և ոչ մուրացածոյ բարբառով շահել զոդիս արանց և կանանց առհասարակ յամենայն եկեղեցին բազմութեան»։

Փարպեցին շարունակում է իր միտքը հետևյալ տղերում։

Զարդարեցան պաշտամունք սուրբ եկեղեցու, յորդորեցան բազմութիւնք արանց և կանանց ժողովրդոց ի տօնս փրկչին և ի ժողովս մարտիրոսաց...։

Փարպեցուն գեղեցկորեն լրացնում է Կորյունը, որը, Ակարագրելով համաժողովրդական այն խանդավառությունը, որ տիրում էր այդ օրերին Հայաստան աշխարհում, գրում է։

«Ան էր չարբենալ գինով, այլ առաւելով հոգով և պատրաստել զսիրս երգովք հոգևորօք ի փառ և ի գովութիւն Աստուծոյ...» (Կորյուն ԻԲ)։

Կորյունի հիշած այս երգերը, որոնք հարբարական էին հոգիները և պատրաստում սրտերը, անկանած նորորակ երգեր

<sup>1</sup> Ղ. Փարպեցի, Պատմ. Հայոց, Ժ 39 և ԺԱ. 51—52:

Էին և հայախոս: Զի բացառվում, որ դրանք մասամբ թարգմանված լինեն հունարենից, սակայն այդ երգերը պետք է, որ խմբագրված լինեն և ունենային հայադրոշնեկարագիր, ենթարկված հայոց լեզվի շարադասության և լեզվամտածողության կանոններին:

Հունականից փոխ առնելու մեջ ոչ մի անպատճենություն չկար, դեռ ավելին, հայունի է, որ Դ դարից դեռևս Լուսավորչի և Մեծն Ներսեսի ժամանակներում մեր Եկեղեցին ամենասերտ հարաբերությունների մեջ է եղել Հոյն Եկեղեցու հետ, Հոյն Եկեղեցու հայրերի աստվածաբանական, դավանական և ծիսական երկերը ընդունելի են եղել մեզ համար:

«Հայր ի սկզբանի անտի ի Յունաց զամենայն բարեձեռութիւն եկեղեցոյն ընկալան և ուսան... նոցա գրովք և աւանդութեամբ պայծառացեալք...» գրում է Ն. Լամբրոնացին<sup>2</sup>:

Եթե 5-րդ դարում քրիստոնյա եկեղեցին դեռևս չուներ կանոնավոր և ծավալուն օրիներգություններ պաշտամունքային ծամերի համար, չկային շարականային երգեր, այլ դրանք պարզ հարաստություններ էին Սալյուսների ու Ս. Գրքի զանազան դրվագների վրա, որոնք կոչվում էին կցուրդներ, Հայաստանյաց Եկեղեցին հենց 5-րդ դարում, գրերի գործոց ամմիշապես հետո և մանավանդ դարավերջին ունեցավ իր ի հեքնուրույն սեփական հոգևոր երգերը, որոնք՝

«Գեղեցկապես յարմարեալ ի խորհուրդ առուր և տօնին»:

Այս հորորակ երգերի հեղինակները նույն ինքն Ս. Սահակն ու Ս. Մեսրոպն էին և նրանց ընտրյալ աշակերտները՝ հատկապես Մ. Խորենացին:

Այս մասին է վկայում նաև «Յայսմատոքք» սեպտեմբեր 17-ին, ի պատմութիւն վարուց սրբոց թարգմանչացն:

«Սրադին երգ շարականաց և կարգեցին եղանակն ամենայն ձայնից, զոր բաժնեաց ի միմեանց սուրբ հայրապետն Խասիակ Պարթև տասն ձայն, այսինքն են՝ ուժ ձայն և երկու ստեղիս»:

Մեր կարծիքով, հայ հոգևոր երգի մեղեդային ինքնուրույնության խարիսխը այս տասն եղանակներն են, որոնք 5-րդ դարում ընտրվել են Սուրբ Սահակի կողմից: Այդ ձայնեղանակները նախ և առաջ պետք է որ լինեն զուտ հայկական, գոյն և վերցված մեր մեհենական սիրված երգերի մե-

ղեղիներից: Այդ սահմանագծված ձայնեղանակները անկանության պետք է ծանոթ լինեն հայ մարդուն, այլապես անհմատ կիներ վերոհիշյալ համակարգի ստեղծումը:

Սխորժալուր և ցանկալի մեղեղիների համակարգն ստեղծելուց հետո; Խորին վող նոր երգերն անկանության սիրով կլավերին հայ հավատացյալի կողմից:

Չատ շուտ ստվորում և երգում էր այդ երգերը հայ հավատացյալը, այդ է պատճառը նաև, որ այդ երգերը հիմնականում բանավոր ճանապարհով ավանդվել են սերնեւ-սերունդ բազմաթիվ ու ծիգ դարեր շարունակ:

«Յայսմատոքք»-ից հետո, արժեքավոր տեղեկություն է մեզ ավանդել նաև Կիրակոս Գանձակեցին իր «Պատմութիւն հայոց» գրքում: Մեջ բերենք Գանձակեցու տողերը.

«Սրադին երգ շարականաց քաղցր և գեղեցիկ եղանակաւ և մեծ խորհրդով, ՄԱՐԴԵԿԱՆԱ Քրիստոսի և բառասնօրեայ գալլուտեան ի տաճարն, մկրտութեան, և եկաւուրութեան ի Բեթամիա և յԵրուսաղէմ, մեծի Շարաթու շարչարանացն, Ցարութեան և Համբարձման և Հոգու Գալատեան, Խաչի և Եկեղեցոյ, և այլ տօնից տէրունականաց և ամենայն սրբոց, ապաշխարութեան և ամենայն ննչեցելոց, պէսպէս զանազանու և անթիւս, զոր մինչև ցայսօր պաշտի յԵկեղեցին Հայաստանացն»:

Այսախով, 5-րդ դարը նաև հայ քնարերգության սկզբն է, այդ դարում խորին ված հայ հոգևոր երգերը մեր գրավոր բանաստեղծության առաջին և անդրամիկ նմուշներն են:

Ասենք նաև, որ կրոնական այդ բանաստեղծությունները նախ և առաջ օրիներգություններն են, որոնց ձևը ծնվել է քրիստոնյա ընդհանուր եկեղեցում և որոնց նպատակը եղել և մնում է՝ զորացնել հավատացյաների մեջ կրոնական չերմեռանդությունը, ապաշար հանդիսավորություն և շուրջ հաղորդել եկեղեցական տոներին ու արարողություններին:

Հինգերորդ դարի մեր այդ առաջին բանաստեղծությունները ունեն դասական լեզվի զարմանալի կանոնավորություն և գեղեցկություն, ոճի ու պատկերների վսեմություն ու վայելչություն, անթերի հնչականություն և այլն:

### ՄԵՐ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Ժարակաների հեղինակների մասին մատենագիտական ամենամիջն վկայությունները 13-րդ դարից են:

<sup>2</sup> Ն. Լամբրոնացի, Քննութիւն կարգաց Եկեղեցոյ, էջ 86:

Մեզ են հասել մի քանի ցուցակներ, որոնց հեղինակները անհանու տարբերություններով այս կամ այն երգը վերագրում են զանազան շարականագիրների: Տարբերություններն ակնառու են հատկապես Սարգիս երեցի ցուցակում՝ 18-րդ դար:

Մեզ հասած ցուցակներից երեքը արձակ հորինումներ են, իսկ երեքը՝ շափածո:

Մեջ քերենք առաջին երեք հեղինակների ցուցակներից այն հեղինակների վերագրումները, որոնք վերաբերում են մեր գրուցի՝ խնդրու առարկա երեք հեղինակներին:

Ա. Սարգիս երեցի խմբագրություն, ԺԳ դար (մեջքերեխիս ուղղագրությունը պահպանել ենք համաձայն բնագրի):

«Յաղագս որո, թէ հին և ոոր շարականք և երգերն լումն աւացան. Որք զծորանս հոգույն սրբ արքին յիմանալի աղբիրեն. երգեցին ի ժամանակս ժամանակ»:

1. Զծննդեանն Մովսէս քերթողն ասաց.

2. Զիդիման առաջին աւորն, զվարդավարին առաջին աւորն, զմարգարեից հինն, զվարդապետաց հինն, և զԱռաքելոց հինն մինչ ի մեղաք յամենայնին Ցոհան Մանդակունեցին ասաց:

5. Չապաշխարութեան հարցերն և զտէր յերկնցերն Մեսրոպ վարդապետն ասաց (ընդգումը մերն է—Խ. Պ.):

6. Չողորմեքն ապաշխարութեան Բեմիկ Վրդ. ասաց.

12. Զիաշին կարգն և զեկենեցոյն, և զայնից բաժանումն Սուրբ Սահակ Պարուն ասաց»:

Բ. Ըստ Գրիգոր Տաթևացու ցուցակի.

«Կասն շարականաց թէ ով ոք է ասացեալ.

Որք զծորանս հոգույն արքին և ի ժամանակս ժամանակս երգեցին եղանակաւ երգը շարականաց՝ այսոքին են.

1. Նախ Մեծն Մեսրոպ զկարգն ապաշխարութեան.

2. Եւ սուրբն Սահակ զաւագ շարաթեանն.

3. Մեծն Մովսէս քերթողն զՄննդեանն և զմեծացուցէքն, և զՏեառնընդառաջին, և զիդիման առաջին պատկերն: Այս զկարգն Յարութեան սրա է ասել Մեծն Վարդան ի տեսութիւն Անթառամ ծաղկին, իսկ այլք ասեն թէ Անանիա շիրականին է ասացեալ:

Եւ զՊեճակուտէին, և զՎարդավառին, և զուրք Գրիգորին, և զՅովաննուն, և զմարգարէցն, զվարդապետացն, և զԱռաքելոցն, և զԹագաւորացն, և զԱնտոնին, զայս ամենայն ոմանք Անանիայի տան և ոմանք Խորենացույն»:

Ըստ անանուն խմբագրության, ԺԸ դար.

«Որք զծորանս հոգույն արքին և ընդհանական ժամանակաւ երգեցին զեղանակաւոր երգս շարականաց.

1. Նախ՝ սուրբն Խահին և Սուրբն Մեսրոպ ասացին զութն եղանակաւոր ձայնուն և զերկու ձայն ստեղիս:

2. Ապա սուրբն Խահին զԼազարուն և զկարգն Աւագ շարաթեան:

3. Սուրբն Մեսրոպ՝ զկարգն Ապաշխարութեան:

4. Սուրբն Մովսէս Քերթող՝ զծորագալուց Ուրախացիրն, զկարգն Մննդեանն և զԱնթառամն, զՏեառնընդառաջին, զՅարութեան հարցուն, և զառաջին պատկերն Հոգու Գալատեան, զՎարդավառի, զվերափոխման, և զմեծացուցէքն:

զՅովաննունուն, զարբոյն Գրիգորին, զՊՄարգարէցն, զՎարդանանցն, զայս ամենայն ոմանք Անանիայի տան և ոմանք Խորենացույն»:

Ժարականնեցի ուսումնասիրությամբ պարապող բանասերները հոգւոր երգեցի հեղինակների հարցում հիմնականում հենվում են Գր. Տաթևացու և այս վերջինին՝ Անանունի ցուցակի վրա: Դժվար չէ նկատել, որ այս երկու ցուցակներում առկա վերագրումները բավական նման են իրար, և որ, «Ոմանք Անանիայի տան, և ոմանք Խորենացույն» արտահայտությունից պետք է եզրակացնել, որ հնում նման ցուցակները շատ են եղել, որոնցից և օգտվել են և Տաթևացին, և մյուսները, սակայն դրանք, զավ ի սիրու, մեզ չեն հասել, գոնե մինչև ալժմ:

Անանունի ցուցակը հիմնականում տեղ է գտել մեր գրեթե բոլոր տպագիր շարականցների տիտղոսաթերթերում:

Իսկ ինչ վերաբերում է Սարգիս երեցի ցուցակին, ապա պետք է ասել, որ Երավերագրումները մեծապես տարբերվում են մյուսնեցից, և բավական անընդունելի վերագրումներ կան նրա ցուցակում:

Անկանած Սարգիս Երեցի ձեռքի տակ եղել են մեկից ավելի ցուցակներ, որոնցից էլ օգտվել է հերք:

Վերջինս մեզ է բերում հեղինակների ու երգերի անուններ, որոնք չկան մեզ հասած և ոչ մեկ ցուցակում: Մի քանի երգեր էլ գտնում ենք պարականոն շարականների մեջ: Ս. Երեցի նշան զինն կամ զնորն հորչորչումը խորհել է տախս, որ մեր շարականց ծողովածուն զգալի փոփխություններ է կրել ԺԲ դարում շնորհայի Հայրապետի կողմից, և որ ԺԲ դարում ոչ բոլոր ձեռագիր շարականոցներում էին տեղ գտել Շնորհալու հորինած նոր երգերը, որոնք աստիճանաբար պետք է փոխարիննեին մի

շարք հին երգերի: Այսպես պետք է հասկանալ նաև այդ շրջանում գրված մի շարք շարականցների նման թեղադրանքները կամ Ամուշները, ինչպես օրինակ, — Եթե գիտես զնորերն ասա» և այլն:

Այդ նորերը աչքի էին ընկնում հատկապես իրենց բանաստեղծական նորովի կերտվածքով, ինչպես նաև Հայաստանյաց Եկեղեցվո ուղղափառ վարդապետության և աստվածաբանական խնդիրների ու ընդունված տեսակետների հագեցվածությամբ:

Իսկ ինչ վերաբերում է մեզ հասած շարականների հեղինակների երեք չափածո ցուցակներին, որոնց հեղինակներն են՝ Առաքել Սյունեցին, Ստեփանոս Զիք Չուղայցին և Հակոբ կաթողիկոս Ստեփին, սրանցից Սուաքել Սյունեցին միայն անուններն են հիշում, առանց երգերի մասին որևէ ակնարկ անելու, իսկ մյուս երկուսը հիշում են նաև երգերը: Մեջ ենք բերում նաև չափածո սողերը հինգերորդ դարի մեր երեք սրբազն շարականագիրների մասին.

ա. ՅԱՆՈՎՔԵԼ Մինեաց վարդապետէ շինեալ ուսանաւոր շարականաց արարողաց.

5. —Անունք սրբոցն որ ասացին  
ըզշարական հոգուվ շնորհին,  
Մարունք քաջ և բաղձակին,  
Մեծըն Մեսրոպ զարմանալին:
6. —Դարձեալ Մովսէս Խորենացին...
11. —Սոցա գլուխն ամենայնին,  
Մեսրոպ Սահակն էր Պարթևին,  
Բուն թարգմանիչըն Հայոց ազգին,  
Սուրբք երաժիշտըն աստուածային:
12. —Այնք որ ութեակ ճայնս կարգեցին  
Եւ կրնակի ստեղի եղին՝  
Նոցա շնորհքն ընդ մեզ լիցին:

Հնդամենը 13 քառասորդ է:

—Ի տէր Ստեփանոսէ գիտնական քանայէ ասացեալ սակաւ ուսանաւոր յաղագ շարականաց թէ յումնէ են երգեալ:

1. —Որք ըգծորանս հոգույն արթին,  
ըզշարականն ոգեալ գրեցին,  
Նախ մեծ Մեսրոպ Տարօնացին,  
ըզկարգ Աղջիցն Ամեննին:
2. —Զշարչարանաց Աւագ շարթին,  
Խորիշրդով լի և անթերին,  
Մեծըն Սահակ Պարթևակին,  
որ էր պրոտոպ Լուսաւորչին:
3. —Իսկ զՅայտնութեան և զՅարութեան  
Սուրբ Գևառեան քառամօրին,  
Զմեծացուցք ընդ փոխման կուսին,  
Մովսէս քերթող Խորենացին:

4. —Ըզպատկեր սուրբ Պետակուտին,  
ըզկարգ մեծի վարդապատին,  
Զմարգարէիցն և զՄըկրտչին  
ԶԱռաքելոց և զԱնտոնին:
5. —Զվարդապետացն և զԳրիգորին,  
Զբագաւորացն Գյլխովին,  
Շիրակացոյն ոմանք ասեն  
Այլք՝ Մովսէսի քերթող վեթին:

Հնդամենը 28 քառասորդ:

Հակոբ Սակցի

Ուսանաւոր վասն ցուցանելոյ զերգող շարականաց յոգեալ ըստ նախագիծ տանց:

3. —Կու խնդրէ նայ զբանս կածնաւոր,  
Յոհան էրեցն Զելյանայ գիր խոր,  
Զշարակներուն ասողք ո՞վ որ,  
Զի իմասցի զամէնն բոլոր:
6. —Կարգ ՄԱնդեանն է քերթողայ,  
Մեծացուցքըն ի հետ նորայ:
7. —Այլ Տեատրնեառառաջն ալլի սորայ,  
փոխման առաջքն աստուածանայ,  
կարգ Յարութեան յոգեալ սըմայ,  
ի այլք կու ասեն Անամիայ:
8. —Այս վկայեալ ի Վարդանայ,  
քանզի հարցմանցն այսպէս տեսայ,  
Հարց Գյլխաւտմանն Յովհաննիսայ,  
Եւ Համբարձումն Աշխարհմատրեայ:
9. —Ռարուն Շիրակացին,  
Այլք կու ասեն զԽորենացին,  
Զբագաւորացն և զԱնտոնին,  
ԶԱռաքելոց զերանելին:
10. —Դոցա Պետակուտ Կիրակին,  
Եւ կիրակի Վարդապատին,  
Եւ Յովհաննու մեծ երրորդին,  
Ով երշանիկ՝ Լուսաւորչին:
23. —Նայ Սոցաց կարգն է Մեսրոպայ,  
Աւագ Շարաթ Պարթ Սահակայ...

Հնդամենը 35 քառասորդ:

Այսպիսով, ինչպես տեսանք, չափածո ցուցակ կազմող հեղինակների համար ուղեցույց է հանդիսացել Գրիգոր Տաթևացու կազմած ցուցակը: Զի բացառուն նաև, որ հատկապես Հակոբ Սակցու ձեռքի տակ եղել են նաև այլ խմբագրություններ, այդ երկուս է նրա չափածո ցուցակի 33-րդ քառասորդից՝

—Ռարուն Յակոբ սոսկ կոչեցայ,  
Կըրպակ մըտաց այսքան Գյլտայ,  
Տես դարավետ ճաղիս եղայ,  
Զի զամազան օրինաց կայ:

Այս գեղեցիկ չափածո ներբռովը հորինվել է ծայրակապով, որի 35 տևերը կազմում են՝

—Յակոր վարդապետ Սլսցո Խընդրէ Յունան էրէց:

Ծարականների հեղինակների մասին մեր նկարագրած և մեջ բերած տողերը քաղել ենք բանասեր Հակոր Անապանի «Հայ մատենագրություն» արժեքավոր աշխատության Ա հատորից, էջ LXVI—LXXIII:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ  
ԵՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Երբ խոսվում է 5-րդ դարի հայ հոգևոր երգի մասին, բանասիրությունը հենվում է ավանդության վրա: Հինգերորդ դարում ծավալուն և մեծարժեք օրինությունների կամ կանոնավոր հոգևոր երգերի գոյության մասին հայ բանասիրության մեջ արտահայտվել են տարրեր կարծիքներ: Որոշ բանասերներ գտնում են, որ 5-րդ դարին վերագրվող որոշ երգեր չեն կարող հորինված լինել այդ դարում:

Երջանկահիշատակ Եղիշե արքեպս. Դուրյանն այս մասին գրում է.

—Գալով այն ավանդության, որ կարգ մը ապաշխարության շարականներ կամ պահոց օրինություններ կը նծայեն Մեսրոպի՝ կեղակարծ կերսի մեզի», բայց թիշ հետո նա ավելացնում է.

—Թեև բանավոր պատճառ մը չունինք այդ երգերուն հարազատությունը լուրջ կամածի տակ առնելո՞ւ:

Եղիշե պատրիարք նույն կարծիքն է արտահայտել նաև Ս. Սահակին ընծայված երգերի Ակատմամբ:

Սիամբում է նաև բազմավաստակ բանասեր Մ. Արեւյանը, երբ իր «Հոգևոր երգ» վերլուծական արժեքավոր ուսումնասիրության մեջ գրում է հետևյալ տողերը.

«Մեր հոգևոր երգի սկիզբը 5-րդ դարում դներով հանդերձ՝ անհավանական է կարծել, թե այդ դարում մեծ օրիներգություններ գրված լինին, նույների մեջ անգամ այդպիսի երգերը ծաղկում են առավելապես 6-րդ և 7-րդ դարերում»<sup>4</sup>:

Պետք է ասել, որ իրոք սկզբնական շրջանում մեր հոգևոր երգը զգալիորեն իր վրա կրել է հույն և ասորի եկեղեցիների հոգևոր երգ ու երաժշտության ազդեցությունը: Սակայն իր ստեղծման առաջին իսկ օրերից, ինչպես նաև իր զարգացման

<sup>3</sup> Եղիշե Դուրյան, «Հայ դպրութան պատմություն»:

<sup>4</sup> Մ. Արեւյան, Երկիր, Բ. Գ., էջ 529:

հետագա ողջ ընթացքում հայ հոգևոր երգը աչքի է ընկել իր յուրահատկությամբ, ընդհանուր կառուցվածքով, մեղեդային բազմազանությամբ, լեզվամտածողությամբ և բանաստեղծական խոսքի, ոճի ու գեղարվեստական հնարքների համարձակ ու առատ օգտագործմամբ:

Կասկածից վեր է, որ մեր սուաշին շարականագիրները օժտված են եղել երաժշտական արվեստի խորը իմացությամբ: Ղ. Փարպեցին Ս. Սահական երաժշտական ու քերթողական կարողությանց մասին գրում է:

«Եղեալ կատարեալապէս հմուտ երգողական տաղիցն, և հնեսորական յորդաաց յայտնաբանութեամ...»:

Մենք կարող ենք շատ օրինակներ բերել 5-րդ դարի մեր քննութեագությունից, որոնք առանց դուզգն կասկածի 5-րդ դարի այս կամ այն հեղինակի հորինումներն են: Սցանչիսի երգերից կարելի է վկայակոչել Ս. Խորենացու հանրահայտ «Անթառամ ծաղիկ» երգը, եղագ, որի մասին ինչպես հայունի է, առանձին ուսումնասիրություն է գրել Վարդան Արևելցին՝ «Տեսութիւն Անթառամ ծաղիկն» վերնագրով: Ահա այդ գոհարը.

Ա. —Անթառամ ծաղիկ անդատապարտ շառափիդ, վերաբունակ յարմատոյն յեսսեայ,

զգքեզ Եսամիս կանչաւ վերագոշեաց Եւթնարփեան շնորհաց հոգւոյն ընդունա-

րան գոյ՝ Աստուածածին և կոյս, զքեզ մեծացուցանեմբ:

Բ. Համեղաճաշակ պտղոյն բանաւոր բարենակ,

յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն անսպառ, յուրախութիւն տրտմեցելոց

ի ճաշակմանէ ծառոյն գիտութեան:

Սիրուի անարատ, ամեներեան, զքեզ մեծացուցանեմբ:

Խորենացու երեք տներից բաղկացած այս գոհարն ունի նաև բանաստեղծության զուգակշիռ մեղեդի ԲԶ ձայնենանակի դարձածուի: Այդ նույն մեղեդիով է երգվում նաև Հոգեգալատյան կանոնի ճաշու շարականը՝ «Որ ի հարաշարծ»:

Գեղեցիկ են նաև «Ույ գերահրաշ ծաղիկ», «Ծագումն իրաշալի», և այլ շարականներ, որոնք նույնպես ընծայվում են Խորենացուն:

Ի վերջո, բաղաքակիրթ ազգերի մշակութային կյանքում որևէ դարաշրջան կազ-

<sup>5</sup> Ղ. Փարպեցի, Պատմ. հայոց, Ժ, էջ 86:

մող բարձրարժեք ստեղծագործություն ծընվում է նախընթաց ժամանակահատվածում ազգի մշակութային կուտակումների հիման վրա: Այդ կուտակումները արդեն առկա էին մեզանում և Զ դարերում, քանի որ է դարի սկզբին Կոմիտաս կաթողիկոսի հորինած «Անձինք նուիրեալք»-ը այդ մասին է խոսում:

Ահա թե ինչ է գրում այս մասին Մ. Արենյանը:

«Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» երգի մեջ մեր հոգևոր երգը բավական մեծ կատարելության է հասած իր ձեւով, ուստի պետք է ընդունել, որ մեր եկեղեցական բանաստեղծության ծաղկման մի նախապատրաստական շրջան եղած պիտի լինելու և Տէրունական տոների համար արդեն երգեր հորինված պիտի լինեն նախքան Հոկտեմբերյան «Անձինք»-ի նման մի մեծ քերթվածի երևան գալը: Այս քերթվածն էլ հարկավ մենակ չպիտի լինելու իր տեսակի մեջ, բայց ոչ բոլոր այդպիսի օրինագործությունները հասել են մեզ»<sup>6</sup>:

Մեր ասածի լավագույն հավաստումը կարող են հանդիսանալ նաև Ստեփանոս Սյունեցուն վերագրվող «Յարութեան Աւագ օրինութիւնք»:

Ապաշխարության երգերի ընդհանուր նկարագիրը. Սրտաշարժ զգացումներով և անկեղծ զղչումի սքանչելի պատկերներով գեղուն այդ երգերը գեղեցկորեն արտացոլում են աստվածանու սրտի կենադանի ու շնչող պատկերը: Բանաստեղծը մերժ հուզվում է, մերժ ալեկոնդվում կենցաղի ծովի մրրկված ալիքների մեջ, մերժ սասամփում ու գոչում պաղատագին հառաչմամբ:

Ա. 2.—Վըտանգիմ ի բազմութենե մեղաց ինոց

Աստուած խաղաղութեան օգնեա ինձ:  
Ալեկոնդիմ հողմով անօրէնութեան իմոյ,  
Թագաւոր խաղաղութեան օգնեա ինձ:  
Ի խորըս մեղաց ծովու տարաքերեալ  
ծըփին.

Նալապետ բարի փրկեա զիս:

Եվ կամ մեկ ուրիշ գեղեցիկ պատկեր՝ կենցաղի ծովում ալեկոնդի:

ԱԿ.—Ծով կենցաղոյս հանապագ զիս  
ալեկոնծէ,

Ա. Մերուպ Մաշտոցին վերաբերվող այս շարք աչքի է ընկնում լեզվի և ոճի պարզությամբ ու նարուտ պատկերներով:

<sup>6</sup> Մ. Արենյան, Երկեր, հատոր Գ, էջ 529—530:

Մրրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ. Նավապետ բարի լեր անձին իմոյ ապաւում:

Բանաստեղծի տագնապը որքան մեծ է, նովնքան մեծ է նաև նրա փրկության հովուը և հավատքը:

— Մերձ եմ լընկումի, օգնեա' ինձ,  
նաւապետ բարի,  
Քանզի ծանրացան ի վերայ իմ բենինըք  
մեղաց:  
Աստուած յօգնել ինձ փուլա՛, քանզի խորըք  
չարեաց լընկումն զիս յանդումդու.  
Այլ դու նաւապետ լեր և ինձ ձեռնտու.  
Փըրկեա ի վըտանգէ զնաւարենկս ի յալեաց  
ծովէ,  
Քանզի կորնչիմ ի մեղաց անօրէնութեան  
իմոյ:

Բանաստեղծը խոսում է Աստուած հետ, բայց նա միշտ բնության մեջ է, բնության հետ, նրա խոսքը միշտ համեմվում է բնության պատկերներով:

— Ուստաքանց եղէ ես որպէս զարմանենի,  
Պըտղակորոյս՝ որպէս ձիթենի...  
Զցանկ հոգույ իմոյ քակտեցի և եղէ  
անբարունակ որթ...

Ապաշխարության երգերի կարևոր արժանիքներից պետք է համարել նաև այդ երգերի մեղեղային կառուցվածքը: Դրանք հորինված են մեր հոգևոր երգասացության հիմքը հանդիսացող ութ ձայնեղանակներով: Ապաշխարության երգերում առկա են վերինիշյալ ութ ձայնեղանակների ամենաբնորոշ տարրերակները:

Ապաշխարության կարգի երգերի ընդհանուր պատկերների գումարը կազմում է 158 միավոր, որոնցից՝

Ողորմյաներ՝ 48 պատկեր երեքական տներով,

Տեր հերկնիցներ՝ 46 պատկեր,

Մանկութեներ՝ 10 պատկեր,

Համբարձիներ՝ 11 պատկեր.

Հարցի շարականներ՝ 43 միավոր:

Մաշտոցյան հիշյալ շարականները երգում են քառասորդական պահոց շրջանում, Չարաթապահոց օրերին՝ բացի շաբաթ և կիրակի օրերից և չորեքշաբթի ու ուրբաթ օրերից, բացառությամբ Զատկից մինչև Հոգեգալստյան ութօրեքի ավարտը, Ծննդյան ութօրեքի, Վերափոխման ու Խաչվերացի ութօրեքի օրերից:

### Ս. ՍԱՀԱԿԻՆ ԸՆԾԱՅՎՈՂ ԵՐԳԵՐԸ

«Ապա Սորբն Խամակ զՂազարուն, և զկարդ Աւագ շաբաթուն...»:

Ղազարու հարության, Ավագ ուրբաթի և Ավագ շաբաթի երգերի թիվը հասնում է շուրջ երկու տասնյակի: Այդ երգերը հիմնականում Ավետարանական ծագում ունեն:

Հայունի է, որ մեծագործ Հայրապետը, գրական, թարգմանական և լուսավորական բեղմնավոր գործունեության զոգընթաց, կարող ու վայելու ձեռներնեցությամբ կարգավորել է նաև Հայաստանյաց Ներդեցվու պատամունքային ժամերը, Ս. Պատարագի արարողությունը, ժամագիրքը, ծիսարանը, տոնացույցը և այլ ծիսական ժողովածուներ, ճոխացրել է այդ ամենը հոգերով և աղոթքներով, հոգեզմայլ երգերով ու քարազներով:

«Ի՞ր մահկանացու ծեսալ անմահ զիրը լիշատակ եթող...» գրում է Խորենացին իր մեծ ուսուցապետի մասին:

Ավետարանից վերցնելով իր երգերի նյութը, շարականագիր Հայրապետը դրանք սովոր չի շարադրել: Նա բանատեղծական բարձր վարպետությամբ ստեղծել է գեղեցիկ պատկերներ: Այդ երգերը աչքի են ընկնում իրենց հարուստ բառապաշտով, զգացմունքների անհատակ խորությամբ և մարդկային հոգու խորին ծալքերը թափանցելու և ներազելու բացառիկ առանձնահատկությամբ:

Սատվածորդու մատնությունը, շարշարանքներն ու խաչելությունը, մանավանդ թաղման սրտամմիկ դրվագները գտնել իրենց կենդանի նկարագրությունը:

**Գ.Զ. — Ով սքանչելի և տեսիլ ահաւոր, Զարարիչն երկնի և երկրի այսօր տեսաք ի խաչին:**

Տեսեալ ըզտէրն ի խաչին, խաւարեցաւ արեգակն, Եւ վարագոյր տաճարին ցերոյր վերուստ մինչ ի վայր:

Բանատեղծը և՛ պատմում, և՛ ուսուցանում է Ավետարանի կենանորոգ պատգամները: Հուդայի մասին նաև պատմում է և միաժամանակ հանդիմանում և դատապարտում նրա անեներեկի արարքը:

**Բ.Զ. — Արծաթսիրութեամբն մոլեալ Ցուրա, զիր զմեծ ըզլարդապետն ընել երեսուն արծաթոյ հրեցն մատներ...**

Բանատեղծի զայրույթը հասնում է իր գագաթնակետին, երբ Հուդան համբուրելով է մատնում Քրիստոսին...

Կարծեք այդ պահին բանաստեղծը ներկա է կատարվող իրադարձությանը և բացականշում է.

«Ով համբոյր Անգույթեան, նշան և ատիք մամուս:

Այս և հաջորդ կանոնի երգերում շաբականագիրը ամեն ինչ պատմում է խորհրդածությունների միջոցով: Այս տեսակետից գեղեցիկ է Ավագ ուրբաթի հարցը:

**Գ.Զ. — Իչեր յերկնից անըսկիզբն որդի, ի հողելենի ի բնութենէ մարդկան ըզշարչարանը յանձն առեր, օրինեմք զքեզ որ էիր յառաջքան զամենայն յախտեան:**

Որ ասացեր բանի լինել ամենայն երկրի, ի յերկրի յատենի կացեալ տեսանեին արարածք...

Յորմէ դողան զուարթունք երկնից, այսօր եկիր կամա ի խաչ գեղարդեամբն խոցեցար...

Եւ զինաւորըն գեղարդեամբըն յարձակեալ խոցեաց զկող կենարարին...

Բանատեղծի զարմանքը համակում է նաև հավատացյալին, որը բանաստեղծի նման դիտում և ապրում է այդ պահը: Այս շարականում և գեղարդի հիշատակուով կարծեք բանատեղծը ձգտել է հաստատել և շշուել և գեղարդի Հայաստան բերվելու ավանդությունը՝ Թաղենու առաքյալի կողմից:

Այս շարքի յուրաքանչյուր երգի տողերում նկատելի է բազմերախտ Հայրապետի, մեծ ուսուցապետի անձանձրույթ ուսուցանելու տեսչը, ինչպես նաև Սասկածաբանական խնդիրների խորը խմացությունն ու հմտությունը: Գեղեցիկ է հատկապես Ավագ շաբաթի, կամ թաղման կանոնի օրինությունը՝ «Պարգևատուն»-ը: Սա իրոք մի շեղ օրիներգություն է: Երեք պատկերներից կերտված այս գոհարի յուրաքանչյուր տան մեջ շարականագիրը կարողանում է մեկ կամ երկու հապտնություն բացահայտել:

**Բ.Զ. — Պարգևատուն ամենեցուն այսօր խնդրի պարգևն ի Պիղատուէ, և արկողն զլոյս որպէս զօթոց հաւանատուն պատմիլ ի Ցովսեփիայ:**  
Կենդանատուն ամենեցուն այսօր դնի ի նոր գերեզմանի, և գանձն անմահութեան կնքի մատանեալ բահանայից:

Եվ այսպես, բոլոր ինը տների մեջ միշտ նոր համեմատություններ, նոր մակրիններ, նոր պատկերներ, ինչպես օրինակ.

Արարածոց փրկութիւն Քրիստոս այսօր... Կենացանին յախտենից Քրիստոս այսօր... Անմահութեանց տղոր Քրիստոս այսօր... Արեգակն արդարութեան Քրիստոս այսօր... Կուսածին մարմնով Քրիստոս այսօր... Արթոն քնոթեամբ արարիչն ամենեցուն այսօր... Ցնծութիւն արարածոց Քրիստոս այսօր...

Կանոնի մանկունքը «Յովսէփ քեզ հայատացեալ»-ը ստեղի շարական է: Հավանաբար այս մեզ հասած հնագույն ստեղի շարականն է:

#### Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒՆ ԸՆԾԱՅՎԱԾ ԵՐԳԵՐԸ

Ինչպես տեսանք, Խորենացուն վերագրվող երգերը բավականին շատ են, որով շարականագիրների մեջ Խորենացին ամենաբեղմնավորներից է՝ Շնորհալի հայրապետից հետո:

Խորենացին հոգևոր երգեր հորինելու գործին ձեռնարկել է բավականին ուշ, հայվանաբար 480—70-ական թվականներին:

Խորենացուն վերագրվող երգերը հիմնականում աչքի են ընկնում բանասեղծական բարձր վարդապետությամբ, դավանական և աստվածաբանական հագեցվածությամբ և մեղեդիների բազմազանությամբ: Խորենացին իր ուսումնառության տարիներին ձեռք է բերել նաև երաժշտական որոշակի կրթություն:

Տիեզերական առաջին երեք ժողովների որոշումները և բանաձևերը, մեր Եկեղեցու որդեգրած ուղղափառ վարդապետությունն ու աստվածաբանական տեսականութերը իրենց արտացոլումն են գտնել քերթողահոր երգերում: Հաճախ կարելի է նկատել տողեր, որոնցում պարզ կերպով բացատրվում է մեր Եկեղեցու տեսակետն ու վերաբերմունքը Քաղկեդոնի ժողովի նկատմամբ. և այս ամենը շարականագիրը անում է չափի գգացումի նորք մոտեցումով:

Խորենացին խորապես գիտակցել է, թե որքան մեծ նշանակություն ունի հավատացալի բարեպաշտությունը խորացնելու համար Փրկչի Աստվածհայտնության և Ս. Շննդյան, Ութօրեքի, քառասնօրյա տաճար բերվելու և փրկագործության այլ հանգամանքների ճշմարտացի ու կենդանի սյատկերումը երգի միջոցով: Նոր հատկապես այս երգերը ավելի սիրված ու տարածված են եղել:

Քրիստոսի կերպարը ավետարանում խորիդանշվում է լուսով:

—Եւ կեանք եր լոյս մարդկան, և լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ և խաւար հման ոչ եղել հասու...—կարդում ենք Հովհաննու ավետարանի Ա գլուխ:

—Չի լոյսն եկն յաշխարի, և սիրեցին մարդիկ զիսաւար առաւել քան զլոյս...

Աստվածային այդ պայծառ լուսը տեսան Քրիստոսի աշակերտները Այլակերպության պահին՝ Թարոր լեռան վրա...

Ավետարանը, հետևաբար, լուս է համակ, ուստի և քրիստոնությունը լուսի կրոն է:

Հայ հոգևոր քնարերգության մեջ լուսի առաջին փառաբանումը կատարել է Խորենացին՝ Ս. Շննդյան և մեծացուցել երգերում:

—Լոյս ի լուսոյ ծագեալ ի հօրէ լուսաւորեաց զոյեզերս, Ծնունդ անապական յանասուներ լուսոյն...

—Լոյս ի լուսոյ ը հօրէ առաքեցար և մարմնացար ի սուրբ կուսէն...

—Յորմէ արսեալ դողային փայլական ցայտ ի լուսոյն...

Խորենացին լուսով է մարմնավորել նաև Աստվածամոր կերպարը: Լուսով են ողոված Խորենացու մեծացուցել շարականները: Ահա դրանցից մի քանի նմուշ.

—Ըգքեզ Աստուածածին աղբիր անսպառ լուսոյն, որ լուսաւորէ զիսաւացեալս...

—Լոյս լուսոյ մայր և կենարար բնաին,

քեզ երանիցեն ազգ և ազինք ամենայ...

—Լոյս ծագեցար ի քեն նատելոցս ի խաւարի...

—Աստուածածին սիւն լուսոյ...

—Աստուածածին խորան լուսոյ ամփայ բափական արփանը կենաց,

որ եղեր արևելք արեգականն արդարութեան և նատելոցս ի խաւարի լոյս ծագեցեր...

—Մայր սուրբ անարատ լուսոյն...

Խորենացու այս տողերը բավական են ցուց տալու համար, թե որքան գեղեցիկ ու լուսավոր պատկերներ է ատելծել բանաստեղծը և դարձել մեր քնարերգության մեջ Աստվածային լուսի առաջին երգիշը:

Հարուստ և ճոխ են նաև Խորենացուն ընձավոլոյ մյուս երգերը: Աստվածածին վերափոխման կանոնի առաջին պատկերը Խորենացու պահանջելի երգերից է:

**Դ.Զ.** — Այսօր ժողովեալ սըրբոցն ի միասին Տրամելի առաքեալը և սուրբ

կուսանքն,

Զահագգեատուք պայծառացեալք

Լուցանէին զլապտերս իրեանց,

Եւ միաձայնեալ ասէին. Օրինեալ եւ

ամենօրինեալ ի կանայ:

Տիրամոր վերափոխման ավանդությունը իր գեղեցիկ Ընարագրությունն է գուել այս շքեղագոյն երգի տողերում: Տյառնընդառաջի տոնը և տոն է լուսի, ուստի անհինն չէ այդ տոնի կանոնը ևս Խորենացու գոշին վերագրելը: Նախ ասենք, որ մեր հին ու նոր շարակացներում դրված է նաև մի երկրորդ կանոն Տյառնընդառաջի տոնըն: Իր բաղկածքներով: «Այսօր ի Տաճարն եկիրք»:

Սեր կարծիքով, Խորենացին այս շարականն է հորինել Տյառնընդառաջի տոնի համար, այսուել ևս լուսի փառաբանությունն է գերիշխում: Ահա այն.

Այսօր աշխարհի ցուցար լոյս,  
և փրկութիւն տիեզերաց Քրիստոս

Աստուած...

Այսօր իմանալի արեգակն, որ ծագեար  
տիեզերաց Քրիստոս Աստուած...

Ինչպես այս, այնպես էլ Խորենացուն վերագրող մյուս երգերն ու շարականները, որոնք ընդգրկում են Փրկչի մարդեղության, փրկագործության և տէրունի այլ տոների Ավետարանական պատմությունները, ունեն գեղարվեստական մեծ արժեք: Շարականագիրը առանձին սիրով ու վարպետությամբ է գովերգում Աստվածամոր կերպարը: Խորենացին օգտագործելով քրիստոնյա ընդհանուր Եկեղեցու կողմից Տիրամոր ուղղված բազում ստորգելիները, ստեղծել է նաև իր՝ Խորենացիական ինքնաւտիս ու շքեղ մակդիրներ, որոնց հայեցի գործածությունը առաջին անգամ հանդիպում ենք երա երգերում:

Խորենացու համար Աստվածամայրը պայծառ երկինք է, ամպ է թերթ և լուսաւոր, առաւոտ է խաղաղութեան, և Արուսեակ գուարթարար, նա լոյս է համատարած, ցող է քաղցրածաւալ, հիթեղեն սրովք, ծիրանազգեաց և հրաշափառագոյն կոյս է:

Ալպիստով, հինգերորդ դարում ոչ միայն սկզբանավորվում է մեր հոգեւոր երգը, այլ այս նոյն դարում հասնում է զարգացման որոշակի աստիճանի, ստեղծելով անհրաժեշտ նոյն մեր հոգեւոր երգի զարգացման համար հաջորդ դարերում: Մեր առաջին շարականագիրների՝ ս. Սահակի, ս. Մ. Մաշտոցի և Խորենացու հոգեւույզ երգերը ի-

նենց բանասդեղական խոսքի և մեղեդու անթերի ամբողջականությամբ, իրենց դավանական ու Աստվածարանական հարցերի արծարծմամբ հանդիսանում են բարձրարժեք ստեղծագործություններ ոչ միայն հայ, այլև քրիստոնյա ընդհանուր Եկեղեցու հոգուոր քնարերգության մեջ:

Այսօր շուրջ 15 դարեր են մեզ բաժանում մեր հոգեւոր երգի սկզբանավորումից, սկզբան այդ երգերը ոչ միայն չեն կորցրել իրենց հոգեւարար Ենթագործությունը, այլ առավել գեղեցկությամբ ու թարմությամբ են Ենթայանում ունենողին, հուզում, մաքրում և վերացնում են մարդկանց հոգիները, լցնելով հրանց խոր երախտագիտությամբ, հիացմունքի ու հպարտության գացամունքներով»:

Պրմ. Խորեն Պայսանի խոսքից հետո բեմահարթակ հրավիրվեցին հոգեւոր մեմարանի ուսանողները, որոնց հոգեշունչ կատարմամբ հնչեցին գոհարներ Ս. Մեսրոպ Մաշտոցի, Ս. Սահակ Պարթևի և Ս. Մովսես Խորենացու հոգեւոր ստեղծագործություններից:

Գրական-երաժշտական երեկոյի ընթացքում մենակատարումով հանդես եկան. Գյարանի սան Անդրանիկ Գալատյանը (Ս. Մեսրոպ Մաշտոց, շարական՝ «Յամենայն ժամ»), Գյարանի սան Էդվարդ Միրզայանը (Ս. Սահակ Պարթև, շարական՝ «Ահաւոր ես թագաւոր») և Ե լարանի սան բարեշնորի Ռուբեն սրբ. Հարությունանը (Ս. Սահակ Պարթև, շարական՝ «Այսօր գոյով ի Բեթանիա»): Բնագրերն ընթերցում էր Ե լարանի սան բարեշնորի Վազգեն սրբ. Պերաբերյանը, իսկ շարականների երգեցողությանը նվազակցում էր Ե լարանի սան բարեշնորի Սամվել սրբ. Հովհաննիստանը:

Գրական-երաժշտական երեկոյի ավարտին իր գնահատանքի ու օրինության խոսքըն ասաց Վեհափառ Հայրապետը, խրախուսելով մենարանցիներին՝ ավելի ակտիվություն մասնակցելու նման միջոցառումներին և հատկապես բարձր գնահատելով պրե. Խորեն Պայսանի շանըքերը.

«Ես գոհունակությամբ ներկա գտնվեցի այս առաջին հանդիսության, և մեր մեմարանի սաները երգեցին մի շարք շարականներ, հատկապես հինգերորդ դարու: Կարծում եմ, որ նաև դուք գոհ եղաք: Մի տեսակ հոգեւոր խնջույք էր, և հետևաբար, իմ գնահատանքն եմ հայտնում հոգեւոր մեմարանի տեսչության և դասախոս Խորեն Պայսանին՝ իրենց այս նախաձեռնության համար և իրենց այս առաջին կույրի հա-

մար: Կարծում եմ, հետագալին կշարունակվի այս հանդիպումների շարքը և տարին մի քանի անգամ գոնե կհավաքվենք այստեղ՝ լսելու մեր խկապես հոգեշունչ շարականները: Մեր շարականները մեծ արժեք են ներկայացնում ոչ միայն երաժշտական տեսակետից, այլ գուցե, երաժշտականից ավելի, հոգեոր բանաստեղծության տեսակետից, և նաև հայկական աստվածաբանության մտածողության տեսակետից:

Մեծ ասպարեզ կա մեր երիտասարդ հոգևորականների առաջ՝ իրենց ուշադրու-

թյունը դարձնել շարականների ոչ միայն մեղեղական երաժշտության վրա, այլ նաև աստվածաբանական մտածողությանը: և գրական-գեղարվեստական արժեքի վրա, որպեսզի մենք՝ հայերս, հոգևորականները և ժողովուրդ, հետզհետև ավելի կարողանենք հասկանալ և ճանաչել մեր շարականները, իսկ հասկանալ շարականները նշանակում է նաև ճանաչել մեր ժողովուրդը, մեր անցյալը, մեր եկեղեցու հանճարը, քրիստոնեական ոգին արտացոլելու, փառավորելու և պսակավորելու ճանապարհին վրա»:

